ԱՎԻԿ ԻՍԱՀԱԿՅԱՆ. Ավետիք Իսահակյան. Գիտական կենսագրություն. գիրք առաջին. ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, Երևան, 2000, 601 էջ:

Հայ գրականագիտությունը մեծ պարտք ունի Իսահակյանի հանդեպ: XX դարի հայ ամենամեծ բանաստեղծներից մեկի կյանքը և ստեղծագործությունը դեռևս համակողմանիորեն չի հետազոտվել: Բանաստեղծի շատ գործեր դեռևս անտիպ են մնում կամ հրապարակված չեն գիտական անհրաժեշտ մակարդակով: Ջանտեսելով մինչև այժմ տպագրված իսահակյանագիտական արժեքավոր աշխատությունները, պետք է նշենք, որ Իսահակյանի կյանքի և գործի գիտական քննության մեջ, ըստ էության, նոր փուլ է սկսվում:

Իսահակյանի ծննդյան 125-ամյակի հոբելյանական օրերին ասպարեզ եկավ մի գիրք, որին կարևոր դեր է վիճակված Իսահակյանի անհատականության ուսումնասիրության գործում: Բանասիրության դոկտոր Ավիկ Իսահակյանը գրել է բանաստեղծի գիտական կենսագրության առաջին հատորը: Այս գրքի առիթով նախ և առաջ պետք է ասել հետևյալը. Իսահակյանը այն գրողների թվին է պատկանում, որոնց ստեղծագործությունը սերտորեն կապված է իրենց անձնական կյանքի հետ: Ինչպես բոլոր ռոմանտիկ բանաստեղծները, Իսահակյանը ևս երգում է իր ապրածն ու զգացածը այնքան անմիջականորեն, որ նրա քնարական հերոսը գրեթե նույնանում է հեղինակի հետ: Ովքեր առիթ ունեցել են համեմատելու նրա «Հիշատակարանը» քնարերգության հետ, հեշտությամբ կհամոզվեն դրանում: Արժե՞ արդյոք բացատրել, թե ինչքան կարևոր է, ուրեմն, Իսահակյանի կենսագրությունը նրա ստեղծագործությունը ճիշտ մեկնաբանելու համար:

Երկրորդ կարևոր հանգամանքը, որ պետք է հաշվի առնել այս գիրքը քննելիս, հեղինակի անձնավորությունն է: Ավիկ Իսահակյանը մեծացել է մի յուրահատուկ մթնոլորտում, որն ամբողջովին հագեցած էր Իսահակյանով, նրա կենսագրությամբ, նրա պոեզիայով: Մանկության տարիներին շփվել է պապի հետ, վայելել նրա գորովագին սերը, որն արտահայտված է բանաստեղծի «Ավիկին» բանաստեղծության մեջ: Այս հանգամանքը որոշ սահմանափակումներ է ստեղծում հետազոտողի համար. նա, բնականաբար, մնում է իր պապի անվերապահ երկրպագուն: Բայց իր հերոսի կյանքը ներսից կամ շատ մոտիկից տեսած լինելու առավելությունն այնքան կարևոր է, որ մնացած բոլոր հանգամանքները երկրորդական են դառնում:

Եվ այսպես, Ավիկ Իսահակյանը իր գրքում ներկայացնում է բանաստեղծի կյանքի առաջին քսանհինգ տարիները՝ ծննդից մինչև 1900թ.: Անկասկած, հետագա տարիները շատ կարևոր եղան բանաստեղծի ստեղծագործական և հասարակական-քաղաքական գործունեության ճանապարհին: Բայց այս առաջին քառորդ դարը էական է այն իմաստով, որ հենց այդ տարիներին է ձևավորվում բանաստեղծի այնքան վառ, ինքնատիպ, ուժեղ անհատականությունը: Մենք ծանոթանում ենք Իսահակյանի նախնիներին, որոնք եկել էին Հին Բայազետից, նրա ընտանիքին, որն հաստատվել էր Գյումրիում դառնալով այդ բնիկ հայկական, գունագեղ քաղաքի հարազատ մասնիկը: Այս, ինչպես և հետագա գլուխները շարադրելիս Ավիկ Իսահակյանը լայնորեն օգտագործում է ոչ միայն եղած

ուսումնասիրությունները, այլև անհայտ արխիվային նյութեր, որոնք պահվում են Զարենցի անվ. գրականության և արվեստի թանգարանում, պետական պատմական արխիվում: Հետաքրքրական են հատկապես այն նյութերը, որոնք մինչև այսօր այլ հետազոտողների մատչելի չեն եղել. դրանք Իսահակյանների ընտանեկան արխիվի նյութերն են:

Իսահակյան ընտանիքի պատմությունը ինքնին հետաքրքրական է որպես մի հայ ընտանիքի պատմություն, որի մեջ արտացոլվում են ժողովրդի պատմության բազմաթիվ կարևոր առանձնահատկություններ: Բայց այն հետաքրքրական է նաև Իսահակյանի անհատականության ձևավորման բացատրության համար: Իսահակյանը հայ ամենազգացմունքային բանաստեղծն էր. ուրիշ ոչ մի հայ բանաստեղծի գործերում զգացմունքը, սրտի ջերմությունն այդքան անթաքույց, ուղղակի չի արտահայտվել: Եվ ընթերցողը չի կարող չմտածել, որ բանաստեղծի անհատականության այս կարևոր կողմը ձևավորվել է հենց ընտանեկան միջավայրում, ընտանեկան բարքերի ազդեցության տակ: Հիշենք Իսահակյանի ծնողների հարաբերություններին նվիրված տողերը և Ավ. Իսահակյանի կողմից քաղված՝ Իսահակյանի ծոցատետրային գրառումները հոր մահվան մասին...

Հեղինակը մանրամասնորեն ներկայացնում է Իսահակյանի ուսումնառության սկիզբը ծննդավայրում, ապա Հառիճավանքի գպրոցում. հետագա էջերում տեղեկություններ են տրվում Գևորգյան ճեմարանում, ապա և Եվրոպայում սովորած տարիների մասին:

Բայց այս գրքում հատուկ ուշադրության են արժանանում Իսահակյանի սիրուն նվիրված էջերը: Իսահակյանի ընթերցողները վաղուց արդեն դիտեն, որ բանաստեղծի քնարերգության շատ գոհարներ ծնվել են միանգամայն իրական մի աղջկա՝ համաքաղաքացի և հեռավոր ազգական Շուշանիկ Մատակյանի հանդեպ տածած սիրուց: Ավիկ Իսահակյանն այս պատմությունը ներկայացնում է հնարավոր ամբողջությամբ, և դրա համար էլ շնորհակալ պետք է լինենք նրան: Այդ պատմության մեջ բացահայտվում է առաջին հերթին Իսահակյանի անհատականությունը: Այդքան խոր, ուժեղ և անանց զգացմունք քչերին է վիճակվում և այդպես սիրելու համար արդեն ինչ-որ աստվածատուր բան է պետք: Ավիկ Իսահակյանը էջ առ էջ բացում է այդ պատմությունը, ներկայացնում երիտասարդ բանաստեղծի տառապանքները, ոչ միայն այն պահին, երբ քրոջից ստանում է սիրած աղջկա ամուսնության լուրը, այլև տարիներ հետո, երբ ինքն արդեն հասուն մարդ էր, իսկ Շուշանը վաղուց ամուսնացած կին: Հեղինակը լայնորեն օգտագործում է և՛ քնարերգությունը, և՛ օրագրի էջերը, և՛ նամակագրությունը, և՛ բանաստեղծությունները, որոնք օգնում են հասկանալու նրա անհատականությունը: Իսկ անհատականությունը լուսավորում է քնարերգությունը...

Շատ նոր նյութ են տալիս Իսահակյանի եվրոպական թափառումներին նվիրված էջերը: Այս թափառումներում երկու կողմ կա: Մի կողմից՝ ուսումնառությունը, մյուս կողմից՝ թափառումների անհաղթ ծարավ, որը Իսահակյանին չի թողել հանդիստ ապրելու որևէ քաղաքում: Սա ևս Իսահակյանի անհատականության այն գծերից է, որը խոր հետք է թողել նրա ստեղծագործության մեջ, անցել նրա հերոսներին՝ թե՛ քնարական, թե՛ էպիկական և առավել խորությամբ արտացոլվել Ուստա Կարոյի մեջ: Այս խնդրի առիթով ուզում եմ հիշել բանաստեղծի որդու՝ Վիգեն Իսահակյանի հուշերի դիրքը «Հայրս», որն ևս հրատարակվեց Իսահակյանի հոբելյանի կապակցությամբ: Ահա թե ինչ է գրում որդին հոր խառնվածքի մեջ հետաքրքրող գծի մասին. «... հայրս շատ էր սիրում իմպրովիզացիաներ անել ճանապարհորդության ընթացքում, մի տեղ երկար մնալ չէր կարող, նորը, անհայտը միշտ ձգում էր նրան, և հո-

գեպես լավ էր զգում իրեն ճանապարհորդությունների ժամանակ»[1]: Առհասարակ, Վ. Իսահակյանի գիրքը շատ արժեքավոր է ոչ միայն իբրև ընթերցանության հետաքրքրական նյութ մեր մեծ բանաստեղծի կյանքի մի կարևոր շրջանի մասին, այլև գրականագիտական տեսակետից. նրա հաղորդած տեղեկությունները հոր բնավորության այս կամ այն գծի, այս կամ այն բանաստեղծությունը գրելու հանգամանքների մասին իսահակյանագիտությանը շատ օգտակար պիտի լինեն: Իմ բերած խոսքերը հաստատում են այն տպավորությունը, որ Իսահակյանի աշխարհզգացողությունը, ուրեմն և պոեզիան, շատ բանով պայմանավորված են հենց թափառումների հանգեպ ունեցած սիրով: Եվ կարո՞ղ ենք այստեղ չհիշել.

Նորից եկան գարնան անուշ օրերը,
Ցուպս առնիմ, ընկնիմ սար ու ձորերը.—
Սիրտս կուզե հեռուները սավառնել,
Նոր ուղիներ, նոր աշխարհներ թափառել:

Վերադառնալով Ավիկ Իսահակյանի գրքին, ասենք, որ նա ամենայն ուշադրությամբ քննում է բանաստեղծի եվրոպական ուղիները, որ, ինչպես տեսնում ենք, սկսվում են պատանեկությունից և շարունակվում մինչև երեսնական թվականները, մինչև Խորհրդային Միություն գալը:

Եվրոպական ուսումնառության շրջանից շատ կարևոր են այն էջերը, որոնք վերաբերում են փիլիսոփայական նորագույն հոսանքների հետ ծանոթանալուն և Նիցշեից ու Շոպենհաուերից կրած ազդեցություններին: Այս ազդեցությունները չպետք է չափազանցել. Իսահակյանը, ի վերջո, Նիցշեական չդարձավ: Բայց Նիցշեի փիլիսոփայության մեջ տարրեր կային, որոնք շատ համահունչ էին նրա անհատականությանը, և հենց այդ տարրերը անպայման իրենց արտահայտությունն ունեցան Իսահակյանի քնարերգության մեջ և արձակում: Խոսելով Իսահակյանի առաջին գրքի «Երգերի ու վերքերի» մասին, հեղինակը դարձյալ դիմում է Նիցշեին. «Հայտնի էր Նիցշեի սերը դեպի վայրի, անարատ բնությունը, դեպի տարերքի ուժերը, որ վեհացնում ու խանդավառում էին ճշմարիտ արվեստագետի ոգին: Հայտնի էր և նրա սերը դեպի ներանձնությունը, մտքի ինքնամփոփ աշխարհը, դեպի խորասուզումն ու ոգեղենությունը: Այս ամենով թաթախված են և՛ Իսահակյանի խառնվածքը, և՛ նրա առաջին գրքի հերոսի ներաշխարհը: Այո՛, հենց առաջին գրքում շատ զորեղ է մինչև անհատապաշտություն հասնող «ես»-ի զգացումը» (էջ 424): Ճիշտ է նկատված՝ մինչև անհատապաշտություն հասնող, և այստեղ Իսահակյանը չէր կարող չզգալ Նիցշեի հոգեհարազատությունը: Բայց մի այլ տեղ հեղինակը բերում է բանաստեղծի օրագրային գրառումը. «...ես մարքսիստ և նիցշեիստ եմ, սոցիալիստ, անարխիստ, դեմոկրատ, արիստոկրատ»: Եվ իսկապես, Իսահակյանը երբեք որևէ ուսմունքի, այդ թվում և Նիցշեի, գերին չդարձավ, ամեն ինչ ուսումնասիրեց, բայց ամեն ինչ իր տեղը գտավ նրա սեփական անհատականության, սեփական աշխարհընկալման գծած սահմաններում:

Գրախոսվող գրքում մեծ տեղ է հատկացված նաև Իսահակյանի հասարակական գործունեությանը, քաղաքականության, հայ ազգային-ազատագրական շարժման հետ նրա ունեցած առնչություններին: Այս էլ Իսահակյանի անհատականության գաղտնիքներից է «մինչև անհատապաշտություն հասնող եսի զգացումը» և այդքան գործուն, կրքոտ վերաբերմունքը հասարակական խնդիրների, հայկական հեղափոխության հանդեպ: Այն էլ հենց սկզբից, վաղ պատանեկության տարիներից: Ավիկ Իսահակյանը մանրամասնորեն լուսաբանում է բանաստեղծի հետաքրքրությունը Հնչակյան կուսակցության հանդեպ: Սա նրա քաղաքական գործունեության

1 Վ ի գ ե ն Ի ս ա հ ա կ յ ա ն. Հայրս. Երևան, 2000, էջ 163:

սկիզբն էր: Հենց Հնչակյան լինելու մեղադրանքով էլ Իսահակյանն առաջին անգամ աքսորվեց Օդեսա, մի շարք այլ հայ գրողների ու գործիչների հետ: Մեր տպավորությամբ, Ավ. Իսահակյանն առաջին անգամ է այսքան մանրամասն լուսաբանում Իսահակյանի և Հնչակյան կուսակցության կապերը:

Բայց Իսահակյանի հետագա քաղաքական կյանքը սերտորեն կապվեց Հայ հեղափոխական դաշնակցության հետ: Հետազոտության հեղինակը շատ էջեր է նվիրել Իսահակյանի գործունեությանը դաշնակցական կուսակցության շարքերում: Վերջին գլուխներում ներկայացվում են «Հայ-գուկի երգերը» գրելու հանգամանքները, ՀՀԴ-ի տասնամյակին նվիրված պոեմի ստեղծումը, այս բոլոր գործերը ուղղակիորեն կապված էին Իսահակյանի կուսակցական պատկանելության հետ: Անկասկած, դաշնակցությունը մեծ դեր խաղաց բանաստեղծի կյանքում: Իսահակյանը մինչև վերջ պահպանեց իր ներքին անկախությունը և որոշակի պահերի նաև իր կուսակցության հասցեին շատ դառը խոսքեր է ասել (օրինակ, քսանական թվականներին. դաշնակցության ղեկավարներին ուղղված նամակներում), բայց դաշնակցական գաղափարախոսության մեջ շատ բան կար, որ խորապես հարազատ էր Իսահակյանի սեփական գաղափարներին ու հայացքներին: Իսահակյանի կենսագիրն արդարացի է, այդքան մանրամասն խոսելով ՀՀԴ-ի և բանաստեղծի հարաբերությունների մասին (թեև երբեմն թվում է, թե նրա գնահատականները չափից ավելի զգացմունքային են): Դարձյալ, առանց այդ կապի, մենք չենք կարող ճիշտ հասկանալ Իսահակյանի հայրենասիրական բանաստեղծություններն ու պոեմները:

Գրախոսվող գրքի առավելություններից մեկն էլ այն է, որ հեղինակն արժանին է մատուցում իր նախորդներին. բազմիցս հիշատակվում են վաստակավոր գրականագետ Արամ Ինճիկյանի, Ալբերտ Մուշեղյանի, Մուշեղ Նարյանի և այլոց անունները:

Այլևայլ մասնակի խնդիրների շուրջ վիճելու ցանկություն է առաջանում: Մի օրինակ. «Երգերի ու վերքերի» առնչությամբ նա խոսում է Իսահակյանի սերնդի կատարած բանաստեղծական հեղաշրջման մասին, հիշում Հովհաննես Հովհաննիսյանի անունը և գրում. «Բրյուսովը իր բնութագրի մեջ տալիս է նաև Հովհաննես Հովհաննիսյանի անունը...»: Սա մի քիչ արդարացի չէ. Հովհաննիսյանի մեծ դերը արևելահայ նոր պոեզիայի մեջ Բրյուսովից անկախ և նրանից առաջ նշում է Հովհաննես Թումանյանը, որն իր ժամանակակիցներին տրված գնահատականներում շատ ժլատ էր (և այդ նկատում է նաև գրքի հեղինակը Ավետիք Իսահակյանի առիթով): Հիշենք Թումանյանի հայտնի հոգվածը ի պաշտպանություն Վահան Տերյանի:

Իսկ ընդհանուր առմամբ մենք ստացանք շատ կարևոր մի ուսումնասիրություն, և մեզ մնում է սպասել նրա հաջորդ մասերին:

ԱԶԱՏ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ